

տորը թէ Փրկիչը ըսաւ . «Երթայք ի քաղաքն առ այս անուն», այս առեղծուածէն կը հասկցուի որ Տէրը պիտի երթայ բնակիլ մօտն անոր որ պատրաստ է : Ուրեմն այս Վերնատան մէջ Տէրը կատարեց Զատիկը, հոն եւ ընցաւ անոնց որ Թովմասի հետ էին, երբ յարութիւն առաւ մեռելներէն . հո՛ն էր որ Համբարձումէն վերջ աշակերտները Զիթենեաց լեռնէն վերադարձին մօտն 120 եղբայրներով, որոնց մէջ կային Բառնաբաս եւ Մարկոս , հոն է որ Ս . Հոգին հրեղէն լեզուաւ իջաւ աշակերտներուն վրայ Պենտեկոստէի օրը, և հոն է որ այժմ հիմնարկուած է մեծն եւ սուրբն Սիոն , մայրը բոլոր եկեղեցիներուն» («Գիւտ Ս . Խաչի» քարոզէն , Pg. 87 , 1) :

Ս . Եպիփան (307 - 403) կը պատմէ թէ Ադրիանոսի 135 ին Ս . Քաղաքը եկած ժամանակ «Քրիստոնեաները Վերնատան տեղւոյն վրայ փոքրիկ եկեղեցի մը ունէին (այսինքն վերի յարկը), ուր առաքեալները հաւաքուած էին Փրկչին Համբարձումէն վերջ : Նոյն եկեղեցին շինուած էր Սիոնի թաղին մէջ որ քաղաքին կործանման ժամանակ անվնաս մնացած էր» : 350 թիւին Ս . Կիւրեղ Երուսաղէմացին ալ կը յիշէ «Առաքելոց վերնայարկի եկեղեցին, ուր Ս . Հոգին իջաւ անոնց վրայ» (Կոչ . Դ.) : Դ . դարուն եկեղեցին ընդարձակօրէն շինուած էր , 614 ին քանդուեցաւ , 670 ին Արգուլֆ եպօ . վերաշինուած գտաւ իր ուխտաւորութեան : Ան նորէն քանդուեցաւ յետոյ եւ Խաչակիրները վերաշինեցին զայն եւ զոր տեսած է 1165 ին Վրդպուրկցի Յովհաննէս եպիսկոպոսը որ ունի հետեւեալ շահեկան տողերը . «Եկեղեցիին ձախը՝ (այսինքն հարաւը) վերնայարկին մէջ նկար մը կը ներկայացնէր վերջին ընթրիքը , իսկ ստորնայարկին մէջ նկար մը